

DAVID MARSHALL LANG, «ARMENIA : CRADLE OF CIVILIZATION», George Allen and Unwin Ltd, London 1970, 320 p., 115 illustrations, 8 colour plates, 6 maps.

«ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՕՐՐԱՆԸ» : Պերճախօս խորագիր մը, զոր օգտագործած է վրացագէտ Փրոֆ. Տէյվլիտ Մարշալ Լէնկ, Լոնտոնի Համալսարանին կովկասագիտութեան դասախօսը, Հայաստանի եւ հայ ժողովուրդի պատմութեան ու քաղաքակրթութեան նուիրած իր մենագրութեան համար :

Գիրքը հրատարակուած է Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան նիւթական «առատաձեռն» օժանդակութեամբ, ու ձօնուած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի :

Տասնը երկու գրեթէ հաւասար դրուխներու բաժնուած այս հատորը, հիմնական մտահոգութիւն ունի միջազգային ընթերցող

Հասարակութեան սեփականութիւնը դարձնել Հայ ժողովուրդին բերած նպաստը աշխարհի քաղաքակրթութեան:

Տեղագրական ու ցեղագրական ակնարկէ մը ետք, Հեղինակը կ'ուրուագծէ Հայ ժողովուրդի անցած ճանապարհը դարերու ընդմէջէն, անդրադառնալով յատկապէս նախահայկական Հայաստանի հողագործութեան, արհեստներուն եւ Համայնքային կեանքին, Ուրարտուի՝ որպէս Հայաստանի մէջ պետականութիւն ունեցող առաջին ժողովուրդը, Հայ ժողովուրդի կազմաւորման, Մեծն Տիգրանի Կայսրութեան, Քրիստոնէութեան Հայաստան մուտքին, Հայ-Բիւզանդական - Արարական յարաբերութիւններուն, Կիլիկեան Հայաստանին եւ Հայ-Պաղատական յարաբերութիւններուն, Հայ Եկեղեցական Ճարտարապետութեան եւ Արուեստներուն, Գրականութեան եւ Դաստիարակութեան, եւ Քսաներորդ դարու Հայաստանի եւ սփիւռքի մէջ ապրող Հայ ժողովուրդին:

Հատորին հարուստ նկարագրագումը զայն կը դարձնէ կենդանի եւ անմիջական:

Սակայն նկատի առած արծարծուած կարեւոր հարցերը, եւ անոնցմէ իւրաքանչիւրին Համար յատկացուած տեղը հատորին մէջ, դիւրին կ'ըլլայ եզրակացնել թէ Հեղինակը չէ յաջողած ընդհանրութիւններէ անդին անցնիլ: Ծրագիրը կը մատնէ սակայն որ տարբեր ալ չէ աշխատասիրողին նպատակը:

Մեզի Համար առանձնապէս հետաքրքրական է տեսնել որ Հեղինակը մինչեւ մեր օրերը կը հասցնէ իր պատմական սերտողութիւնը, եւ կենդանի դոյներով կը ներկայացնէ մասնաւորաբար մայր հայրենիքի եւ սփիւռքի Հայ կեանքը: Ցարդ՝ օտար պատմադիրներ չէին փորձած անցնիլ 1915 եւ կամ՝ 1920 թ.էն ասդին: Ու իր վերջին դիւլխին խորագիրը՝ «Մահ եւ Յարութիւն», պերճախօս է այնքան, որքան հատորին ընդհանուր խորագիրը:

Հայագիտութեամբ պարապող ուսանողին Համար նորութիւններ չի բերեր այս դիրքը: Սակայն վստահօրէն ան կ'իրականացնէ Հեղինակին առաջադրած նպատակը՝ Հայ ժողովուրդն ու անոր քաղաքակրթութիւնը ներկայացնել աշխարհին, կենդանի լեզուով մը, առանց մեղանչելու գիտական ոգիին:

Իւրաքանչիւր դիւլխի Համար տրուած է առանձին մատենագիտութիւն մը, դիւլխաւորաբար օտար լեզուով դրուած գիրքերու, հետաքրքիր ընթերցողին որոշ ուղղութիւն մը տալու մտահոգութեամբ:

«Հայաստան՝ Քաղաքակրթութեան Օրրանը» կը մնայ զնահատելի եւ շնորհակալ աշխատանք մը: